Հավելված N 4
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2023 թվականի մարտի 22-ի N [illegible]-Լ որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ և ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի (այսուհետ՝ մարզպետի աշխատակազմ) կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հանդիսանում է հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով, «Հանրային ծառայության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին» «Տեղեկատվության ազատության մասին», «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Հատուկ կրթության մասին», «Լեզվի մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին», «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության, վարչապետի և քաղաքացիական ծառայությունը համակարգող փոխվարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի (այսուհետ՝ Մարզպետ) որոշումներով, Գլխավոր քարտուղարի հրամաններով, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Վարչության լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերով:

3. Վարչությունը կազմավորում, վերակազմակերպում և նրա գործունեությունը դադարեցնում է ՀՀ վարչապետը:

4. Վարչության կանոնադրությունը հաստատում (փոփոխում) է Մարզպետը:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Վարչությունն իր նպատակների և խնդիրների կենսագործման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) ապահովում է ՀՀ Վայոց ձորի մարզի (այսուհետ՝ Մարզ) տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացումը, կազմակերպում է մարզային ենթակայության պետական ուսումնական հաստատությունների աշխատանքը.

2) ապահովում է հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի

կատարումը, ապահովում է կրթական և դաստիարակչական ծրագրերի իրականացումը՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան.

3) աջակցում է նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարման ապահովմանը, կրթական ծրագրերի իրականացմանը՝ նախադպրոցական կրթության պետական չափորոշիչներին համապատասխան.

4) համակարգում է հանրապետական օլիմպիադայի դպրոցական, տարածքային և մարզային փուլերի անցկացումը, ապահովում է Մարզի մասնակցությունը օլիմպիադայի հանրապետական փուլին.

5) աջակցում է Մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտներին դասագրքերով ապահովելու գործընթացին.

6) կազմակերպում է Մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների ձևավորման աշխատանքները.

7) համակարգում է մարզպետի աշխատակազմի ենթակայության մշակութային հաստատությունների աշխատանքը, մարզային մշակութային, ինչպես նաև պետական, ազգային ու այլ տոների հետ կապված զանգվածային միջոցառումների իրականացման աշխատանքները.

8) համագործակցում է Մարզի տարածքում ոչ պետական մշակութային և սպորտային կազմակերպությունների հետ:

9) օժանդակում է պետական մշակութային քաղաքականության իրականացմանը Մարզում, իրականացնում է օրենքով սահմանված լիազորություններ՝ Մարզի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանության և օգտագործման նկատմամբ.

10) համագործակցում և օժանդակում է Մարզի երիտասարդության հետ տարվող աշխատանքներին.

11) հսկողություն է իրականացնում Մարզի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում պետական ծրագրերի իրագործման ուղղությամբ.

12) ապահովում է մանկապատանեկան սպորտի զարգացման ծրագրերի իրականացումը, ֆիզկուլտուրային-առողջարարական և տարբեր մարզաձևերի մարզային միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը: Համակարգում է մանկապատանեկան սպորտի բնագավառում պետական իրավասու մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների համատեղ և համաձայնեցված գործունեությունը.

13) աջակցում է «Հեռավոր բարձր լեռնային և սահմանամերձ գյուղերի դպրոցներին ուսուցիչներով ապահովում» ծրագրի շրջանակներում Մարզ գործուղված ուսուցիչներին աշխատանքով ապահովման աշխատանքներին.

14) աջակցում է ուսումնական հաստատություններում սովորողների և շրջանավարտների գիտելիքների գնահատման գործընթացին.

15) աջակցում է ուսուցչի ատեստավորման գործընթացին.

16) ապահովում է Մարզի ուսումնական հաստատություններում «Ռազմագիտություն» առարկայի ուսուցման և ռազմահայրենասիրության դաստիարակության կազմակերպման աշխատանքները.

17) իրավական և մասնագիտական հսկողության շրջանակում իրականացնում է հսկողություն Մարզի տեղական ինքնակառավարման մարմիններում, օրենսդրությամբ

սահմանված կարգով համապատասխան առաջարկություններ և անհրաժեշտ տեղեկատվություն է ներկայացնում Մարզպետին.

18) իրականացնում է մշտադիտարկում բնագավառում տիրող իրավիճակի վերաբերյալ.

19) Վարչությանը վերապահված լիազորությունների շրջանակներում կազմակերպում և համակարգում է Մարզի տարածքում մարզային համապատասխան ծրագրերով նախատեսված արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման, տարերային և տեխնոլոգիական աղետների կանխման, վտանգի նվազեցման և հետևանքների վերացման ուղղությամբ աշխատանքները.

20) իրականացնում է Մարզի քաղաքացիական պաշտպանության բնագավառում Վարչությանը վերապահված գործառույթներ.

21) նախապատրաստում է Վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, եզրակացություններ.

22) կատարում է քաղաքացիների ընդունելություն: Անհրաժեշտության դեպքում տալիս է մեթոդական պարզաբանումներ, տրամադրում է խորհրդատվական օգնություն: Ուսումնասիրում է քաղաքացիների դիմումները, բողոքները և առաջարկությունները:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

6. Վարչության գործունեությունը համակարգում և վերահսկում է Մարզպետը: Գլխավոր քարտուղարը պատասխանատու է Վարչության գործունեության կազմակերպման համար:

7. Վարչության պետն անմիջական հաշվետու է Մարզպետին: Մարզպետը վարչության պետի անմիջական ղեկավարն է:

8. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Վարչության պետը:

9. Վարչության պետն իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ կամ մասնակցում է այդ խնդիրների լուծմանը:

10. Վարչության պետը և աշխատողները համարվում են քաղաքացիական ծառայողներ:

11. Վարչության պետի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: